ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

«04» 05 2018թ.

ՀՀ Լոռու մարզպետ

Ա.Նալբանդյանին

N 51

Կից Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Շենավանի համայնքի ղեկավարի թիվ 10 որոշումը:

Առդիր՝ 1/մեկ/ թերթ:

Համայնքի ղեկավար՝ Գ.Դունամալյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ν 10

«04» մայիս 2018թ.

### ՀԱՍՄԻԿ ՍԱՄՍՈՆԻ ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շենավան համայնքի բնակիչ Հասմիկ Դունամալյանի դիմումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 42 - րդ հոդվածի 1 - ին կետի 6) - րդ ենթակետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Թույլատրել Լոռու մարզի Շենավան համայնքի բնակիչ Հասմիկ Սամսոնի Դունամալյանին նույն համայնքում 3 Փ. 24 տուն հասցեում գտնվող՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի վրա կառուցել բնակելի տանը կից օժանդակ շինություն:
2.Հիմք ընդունելով համայնքի ավագանու 24.01.2018 թվականի թիվ 03 – Ն «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շենավան գյուղական համայնքում 2018թ – ի համար տեղական տուրքեր և վճարներ սահմանելու մասին» որոշման պահանջները շինարարության թույլտվության համար գանձել տեղական տուրք 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:
3.Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման 2 - րդ կետում նշված տեղական տուրքը վճարելու օրվան հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Գ.Դունամալյան